Ը. ՏԱՐԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ 4 ՄԱՅԻՍ 1905 ԹԻՒ 710

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Յանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկրին ուզի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ (Bu garie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՕՐԷՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԶՆՈՒԹԻՒՆ

Գ.

Հռոմէական հին, փարթամ, զօրեղ, աշխարհը սարսեցնող հասարակապետութեան մէջ կային ստուար թիւով քաղաքացիներ, որոնք զուրկ էին հողից։ Թէեւ Լիցինիոսի օրէնքով ամեն քաղաքացի միայն 500 իւգեր հասարակական հողից օգտվելու իրաւունք ունէր, բայց այդ օրէնքը բոլորովին չէր կատարվում տիրող դասակարգի կողմից, յամենայն դէպս մոռացված էր։ Ազնւականութիւնը տիրանում էր ահագին տարածութեամբ հողերի, իսկ հողազուրկ և խեղճ քաղաքացիները այդ չափից էլ զուրկ էին մնում։

Նոյն հողազուրկ ստուարաթիւ քաղաքացիներն էին կազմում Հռոմի ուժը, ստեղծում իսկական փառքը։ որովհետեւ աշխարհակալ Հռոմին նրանք էին տալիս ահագին բանակներ կազմող զինուորները, որոնց տարած յաղթանակների շնորհիւ երկիր թափված հարստութիւնից օգտվում էին միայն տիրող և կառավարող դասակարգը։ որը կամ իր շահերին յարմար օրէնքներ էր ստեղծում, կամ թէ իր շահերին մի քիչ հակառակ ոգի ունեցող օրէնքների գործադրումը զանց առնում։

Երբ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը հողից զուրկ էր ու նստակեաց կեանք չունէր և կազմում էր Հռոմի պրոլէտարը, միլիցայի սիստէմը կորցրել էր իր բնական նշանակութիւնը։ այլևս հռոմայեցիք չէին կռուում իրենց սեփականութիւնները պաշտպանելու համար, որովհետեւ դրանից զուրկ էին։ Այս հիման վրա զարգացաւ միլիտարիզմը Հռոմում, որի շնորհիւ կարելի է խեղդել ամեն մի ազատութիւն, բայց չէ կարելի հայրենիքը ապահովել արտաքին թշնամիների դէմ։

Այս առթիւ

Կոլբ, իր Մարդկային Քաղաքակրթ. Պատմութեան մէջ հետեւեալն է ասում։

«Իրերի այս կացութիւնը, վըտանգաւոր հասարակապետութեան յառաջդիմութեան համար, անկարելի էր որ խուսափէր արթուն միտք ունեցող մարդկանց աչքերից։ Բայց հէնց նրանք, որոնք իրենց ունեցած դիրքով կարող էին աւելի պայծառ կերպով տեսնել իրողութիւնները, հեռապնդում էին իրենց եսասիրական նպատակներին, ու չէին ուզում ոչ մի փոփոխութիւն։ Որովհետեւ փոփոխութեան պարագային թէ իրենք և թէ իրենց ամբողջ դասակարգը ստիպված պէտք է լինէին մեծ զոհաբերութիւններ անելու։

Սակայն ոչ բոլոր ազնվականներն էին այդպէս մտածում. նրանցից երեւան եկան հռչակաւոր Գրաքեան եղբայրները որոնցից Տիբերին ստացաւ ժողովրդային տրիբունի պաշտօնը և ամբողջովին ժողովրդի շահերին նուիրվելով, ուզեց հողային նոր օրէնք ստեղծել հողազուրկերին հողով օժտելու համար։ Բայց նրա պահանջների չափաւորութիւնը և արդարացիութիւնը չը կարողացան սանձ դնել տիրող դասակարգի ագահութեան, ու նրանք սկսեցին հալածել Տիբերի Գրաքին։ Վերջինս կանգ չառաւ կէս ճանապարհին, և, չընայելով իր տռնեւ ելած բոլոր խոչնդոտներին, նոր օրինագիծը ընդունվեց և հողային բարեփոխումներ կատարելու համար ընտրվեց մի յանձնախումբ՝ կազմված Գրաքեան երկու եղբայրներից և նրանց աներոջից։ Ազնվականները այնուհետեւ ուրիշ արգելքներ հանեցին, որպէսզի օրէնքի գործադրումը ետ մնայ մինչեւ Գրաքի տրիբունութեան ժամանակը լրանայ և խանդարեն նրա երկրորդ ընտրութիւնը, որով և նոյն օրէնքը բոլորովին կը մեռնէր։ Այդ արգելքներից չը յուսահատվելով՝ Գրաքը, ժողովրդեան իրաւունքները ապահովելու համար, նոր բարեփոխումներ առաջարկեց և երբ ազնվականները տեսան որ սարսափելի տրիբունը նորից պէտք է ընտրվի, դրա համար էլ ծերակոյտը ժողով կազմեց և որոշեց խիստ միջոցներ ձեռք առնել անվախ ժողովրդական Տրիբունի դէմ։

Կոնսուլ Սկիպիոն Նազիքան չուզեց բռնութիւնը թոյլատրել. այդ միջոցին Գրաքի ամենակատաղի հակառակորդներից մին մի քանի ազնվականներով գնաց Կապիտոլը, ուր ընտրութիւնն էր կատարվում և այն տեղ սպանեցին Գրաքին։ Տիբերիյ Գրաքի և նրա հետեւող երեք հարիւր մարդկանց դիակները նետեցին Տիբրոս գետի մէջ։ և այդպէս ոճրագործութեամբ յաղթանակեց տիրող դասակարգը, իր վրա ընդունելով ոճրագործ և ժողովրդի շահերը պաշպանող հայրենասէրի սպանիչի տիտղոսը։ իսկ Հռոմի տիրող դասակարգի և ծերակոյտի դէմ գնացող Գրաքը դարձաւ մարդկութեան պաշտելի անձերից մին։

Հռոմի կառավարութիւնը Գրաքի սպանութիւնը իրաւաբան օրէն արդարացնելու համար, նրա կուսակիցներից մի քանիսին դատի ենթարկեց, մահուան և աքսորի դատապարտեց։

Սակայն գործը դրանով չը վերջացաւ, Գրաքը սպանվեց չարագործ կառավարիչների դրդմամբ, թելադրութեամբ, քաջալերութեամբ։ բայց ժողովուրդը՝ տանջվող, չարչարվող, Հռոմի համար կեանք զոհող ժողովուրդը յառաջադիմեց և մի քանի տարի յետոյ Տրիբուն ընտրեց մեծ Գրաքի կրտսեր եղբայրը Սէմփրոնի Գրաքին 124 թ-ին, որը մի շարք ժողովրդին նպաստաւոր բարեփոխումներ կատարելուց յետոյ, նոր մի շարք լուրջ և մտածված օրինագծեր առաջարկեց, որոնք բոլորն էլ ընդունվեցին առանց մեծ դժուարութեան։

Այսինքն երբեմնի օրինազանցի և կառավարութեան ու տիրող դասակարգի հալածած Գրաքի նոյնքան օրինազանց եղբայրը դարձաւ օրէնսդիր ու ջնջեց այն օրէնքները որոնց շնորհիւ հարստահարվում էր Հռոմի ժողովուրդը և որոնց հիման վրայ իբրեւ ըմբոստ զոհվել էր իր հարազատ մեծ եղբայրը։

Այսպիսի օրինակներ պատմութեան մէջ շատ ու շատ են, մանաւանդ նոր պատմութեան մէջ. և դրանց մասին կը խօսենք յետագայ յօդուածներով։

ՎԱՐԴՕ

ՀԱՅ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գործնական քաղաքականութիւնը ամէն ատեն էն գործնականը չէ։ Հասարակական գործիչը, որ զոհ կը մատուցանէ սկզբունքները նախապաշարումներուն, ո՛չ թէ միայն անքարոյական մարդ մըն է, այլ նաեւ կարճատես քաղաքագէտ մը։ Այսպիսի անձնասիրական, ազգայնական եւ դասակարգային հայեացք մը, ոչ միայն ոճրագործութիւն մըն է հանրամարդկային բարոյականին դէմ, այլ նաեւ կոչտ սխալ մը գիտութեան դէմ, այսինքն պատմութեան դէմ։ Որովհետեւ ամէն պարագային մէջ վերջապէս ճշմարտութիւնը՝ գիտութեան վրայ հիմնուած՝ յաղթանակը կը տանի. սկզբունքները կը յաղթեն հրացաններուն եւ թնդանօթներուն։

Եւրոպայի անցեալ դարու քաղաքական պատմութիւնը կը ծառայէ իբր ամենափայլուն վաւերացումը մեր լաւատես հայեացքին։ Երկու հոգի՝ երկու չար հանճարներ՝ կը անձնատուրէին բռնութեան եւ բռունցքի իրաւունքի քաղաքականութիւնը Եւրոպայի մէջ. Մեթերնիխ եւ Պիզմարք։ Բայց կրնանք ըսել թէ անոնք հասան իրենց նպատակին։ Շեբիլգէրկեան գետնափոր բանտերը, ուր Մեթերնիխ թաղել կուտար Իտալիոյ ոամ կավարականները, չը կրցին արգելք ըլլալ Իտալիոյ ազատութեան, անոնք չը կասեցուցին 1848 թուականի աւստրիական յեղափոխութիւնը, որմէ փրկուելու համար Մէթերնիխ Անգլիա փախչելու պէտք ունէր։ Ճիշտ այսպէս «Երկաթէ դիւանագէտին» բացառիկ օրէնքները անզօր եղան,

ոչ թէ օրերով այլ ժամերով զարգացող ընկերվարական կուսակցութեան դէմ, որուն հարուածներուն տակ էն վերջը ինկաւ Նաեւ Պիզմարք։

Եւ ասիկայ ամէն ատեն եղած է այսպէս եւ միշտ պիտի ըլլայ այսպէս, որովհետեւ չը կայ աւելի մեծ ուժ անկէ, որուն կողմակիցն է գիտութիւնը եւ յառաջադիմութիւնը։ Եթէ տակաւին չենք համոզուած այս ճշմարտութեան վրայ, կը բաւէ որ նայինք ինչ կըլլայ Ռուսաստանի մէջ որպէս զի համոզուինք։ Հոն նոյնպէս ուժիմ մը, որ իր ետեւը դարաւոր գոյութիւն կը համրէ, քիչ առ քիչ կը ճզմուի նոր գաղափարներու զօրաւոր ճնշման տակ։ Վերջիններուն դէմ ոչինչ պիտի կրնայ օգնել. ոչ ոստիկանական սիստէմները, ոչ չընչին զինուորները՝ Զարի կառավարութեան տկարութեան այս յայտնի վկաները։ Ահա թէ ինչու մենք դարձեալ կը կրկնենք. գործնական քաղաքականութիւնը էն գործնական չէ ամէն ատեն։ Պաշտպանեցէք ազատութիւնը, նոյն իսկ եթէ գործնական քաղաքագէտներ ձեզ կը մեղադրեն իբրեւ միամիտ, եւ վստահ եղէք որ՝ ուշ կամ կանուխ՝ դուք պիտի կրնաք իրենց դարձնել վերոյիշուած վերագիրը, բայց ալ կատարեալ իրաւունքով։ Կոյր է ան որ չը նշմարեր պատճառներու եւ հետեւանքներու երկաթեայ շղթան որ կը գոտիակապէ պատմական դէպքերը, ո՛չ միայն մէկ երկրի եւ մէկ շրջանի մէջ, այլ բոլոր երկիրներու եւ բոլոր շրջաններու մէջ։ Պաշտպանեցէք ազատութիւնը, որովհետեւ միմիայն ասիկայ կրնայ ծնիլ իրեն նման բան մը։ Այն ազատութիւնը, զոր կուտայ բռնապետութիւնը, վաղանցուկ կեղծ խաբեբայական ազատութիւն մըն է միայն. ասիկայ պէտք չէ մոռնայ ոչ մէկ գործող որ ռամկավարական իտէալ կրելու յաւակնութիւնը ունի, ասիկայ պէտք չէ մոռնայ ոչ մէկ ազգ եւ մանաւանդ ո՛չ մէկը այն ազգերէն, որոնք իրենց ստրուկ ժողովուրդները մտածելու յաւակնութիւնը ունին։ Եւ ճիշտ ասիկայ կը մոռնան մեր քաղաքագէտները այսպէս կոչուած Ռուսոֆիլեան բանակէն։

Վեց տարի առաջ, երբոր բոլոր քաղաքակրթուած աշխարհը կը բողոքէր հայկական պաթաքներուն եւ բիրուշտիցաներուն դէմ, անոնց ձայնը չը լսուեցաւ։ Ոչ, ես կը սխալիմ, նա լսուեցաւ, բայց ի նպաստ անոնց, որոնց վրայ Թիւրքիայէն վերջ կիյնար էն մեծ պատասխանատուութիւնը կոտորածներուն համար։ Մեր ռուսասէր մամուլը, շարունակեց բոլոր «Նովո վրէմիա» [Նոր ժամանակ] եւ «Սվեթ» [լոյս] թերթերուն ցածոգի ինթրիքները հայերուն դէմ, մեղադրելով անոնք թէ Անգլիական գործիք են։ Ոչ, ան չը գոհացաւ լսուելեամբ, այլ անգթութեամբ կը նեսէր ցեխ տակաւին չը չորչած հայ գերեզմաններուն վրայ։

Ասոր հետ մէկտեղ մենք կրնանք կատարեալ իրաւունքով հարցնել. եթէ չըլլար հայկական շարժումը, ի՞նչ չրջանի մէջ պիտի գտնուէր Մակեդոնական հարցը։ Թերեւս դեռ յարուցուած ալ պիտի չըլլար։ Ամէն պարագային անտարակուսելի բան մըն է թէ Հայկական ապստամբութիւնը նշան տուաւ միւս ապստամբական շարժումներուն, Թրքական կառավարութեան դէմ։ Ասիկայ ինքն իրեն մեծ ծառայութիւն մըն է, բայց հայերուն բերած օգուտը չը սահմանափակուիր միայն ասով. անոնք բարձրացուցին նորէն բարեկարգութիւններու հարցը Տաճկաստանի մէջ։

Անոնք հանեցին եւրոպական դիւանագիտութիւնը հաճոյալի քնէութենէն. որուն մէջ նա կը գտնուէր 1800–1881էն ի վեր, երբոր վերջին եւրոպական մասնախումբը Թրքական բարեկարգութիւններու մասին կազմալուծուեցաւ։ Պէտք էր հայկական հզօր բողոքը, պէտք էր որ 300,000 զոհեր իյնային Պոլիս եւ Փոքր Ասիա, որպէս զի դարձեալ Եւրոպայի ձայնը լսուէր Տաճկաստանի գերիներուն ի նպաստ։ Ասիկայ պատահեցաւ 1895–1896 տարին։ Այն ատեն առաջին անգամ դիւանագիտապէս բարձրացաւ Մակեդոնական հարցն ալ։ Ֆրանսական դեղին գիրքէն «Հայկական գործերուն մասին» կը տեսնուի թէ պուլկար կառավարութիւնը [Սթոյիլոֆին դահլիճը] որ մինչեւ այն ատեն կը անգիտանար մակեդոնական հարցը, ուղեց առիթէն օգտուիլ դիմելով Պոլիս գումարուող պատգամաւորներուն, որպէս զի Փոքր–Ասիոյ համար մշակուած ռէֆորմները տարածեն եւրոպական տաճկաստանի վիլայէթներուն վրայ։ Թէ որքան այս փորձերը յաջողութիւններով պսակուեցան, ասիկայ ուրիշ հարց մըն է. բայց պէտք չէ մոռնալ թէ հայկական այս թուականէն բացուած էր մակեդոնական հարցը։

Հայկական շարժումը անտարակոյս որոշ ազդեցութիւն ըրաւ մակեդոնական շարժման բնաւորութեան վրայալ։ Ոճրագործ՝ բայց ոչ անակնկալ՝ հակառակութիւնը, զոր ռուս դիւանապետութիւնը զինեց Թրքական բարեկարգութեան դէմ, սորվեցուց մակեդոնացիներուն թէ՝ պէտք է իրենց ոյժերուն եւ եւրոպական ժողովրդներու հասարակական կարծիքին վրայ վստահին։ Բայց այս հասարակական կարծիքն ալ որ այսօր այնքան ուշադրութեամբ եւ համակրութեամբ կը հետեւի Մակեդոնիոյ դէպքերուն, նոյնպէս նախապաշարուած էր հայկական շարժումէն։ Ասիկայ առաջին անգամ Եւրոպայի ուշադրութիւնը արթնցուց օթոմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած սոսկումներուն վրայ։

Նոյն ինքն ռուսական դիւանագիտութիւնն ալ պէտք էր, երբոր տեսաւ թէ ի՞նչ ընդհանուր անվստահութիւն պատճառեց պալքանեան թերակղզիին վրայ իր դաւաճան վարմունքը 1895–96 թուականին, պէտք էր կերպով մը փոխելու իր քաղաքականութեան ճակատը։ Ցիրաւի թէ այս փոփոխութիւնը արտաքին է միայն։ Ներգամիտ եակօէն պատմաւոր մարդ չըլլար։

Շարունակելի

Ֆիլիպէ Թարգ. Ա. Ղ.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՆ

ԺԱՆ ԺԱՔ ՐՈՒՍՍՕՅԻ

Ա.

Ռուսներուն կրած յաջորդակի ձախողուածները, որ տեղի ունեցան այս տաներեվեց ամսուան մէջ թէ Ծ. Արեւելքի և թէ բուն երկրին վրայ առաջ բերին բովանդակ աշխարհի քնակչութեան համար չլսուած հետաքրքրութիւն մը. այնպէս որ այսօր արարած աշխարհ լարուած թունդ ուշադրութեամբ, ակնապիշ տեսնել ուլսել կուզէ վաղօրօք թէ ի՞նչ պիտի լինի վախճանը, ներսէն ու դրսէն հրդեհեալ այս ընդարձակ բռնապետութեանը։

— Երբեմն ամենաբարի Աստուածը գիտէր, իսկ այժմ ալ մի միայն Ներվանան։

Բ.

Ռուսներուն կրած այս յաջորդակի ձախողուածները ոչ ոք չուրանար բնականաբար (!) — Կան թերեւս շատ հեթանոսներ որոնք սրտանց կուրախանան։ Մենք հայ քրիստոնեաներս բնականաբար շատ պիտի տրտմինք քրիստոնեայ թագաւորի մը պարտուելովը։ Անշուշտ ամենքարի քրիստոնեայ հայ ձեռքը իւր սրտին վրայ դնելով մեղ պիտի ըսէ.

«Թող միայն Աստուած գիտնայ ինչ որ սրտէս կանցնի»։

Կերեւի ժան ժաք Ռուսսօն եւ արդի խել մը ռուսասէր գիտուն քաղաքագէտներն կամ մեղ պէս բարի քրիստոնեաներ չեն եւ կամ մենք անոնց խորհելակերպը չենք գիտեր։ Զի այսօր բոլոր ռուսասէր քաղաքագէտներն «հրաշափառ փրկագործութիւն» մը կը համարեն իրենց կրած այս ձախողուածներն. եւ կը յայտարարեն այսպէս ի լուր աշխարհի։

Շնորհիւ այս պատերազմի Ռուսաստանը պիտի տիրանայ ներքին մի մեծ բարեկարգման կամ փրկագործութեան, որուն կարիքը բացարձակ էր։ Որովհետեւ Ռուսաստանը կը նմանի այսօր շարաւալից ախտաւոր մարմնի մը, որուն ամեն կողմերէն դուրս ցցուած են դեղնցած ծայրերով բիւրաւոր ցպիկներ. հարկ է որ տրաքին այդ ցպիկները դուրս թափեն շարաւները. որ փրկուի մարմինը իրան գոյութեանը բսպառնացող վտանգէն։

Ուրեմն մաղթելի է որ շուտով տրաքին այդ ցպիկները։

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՕՐԻԱ ՊՅՎԼՕՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

27

Զ.

(Շար. նախորդ թիւեն)

Վիկտօրիան, անշարժ մարմարցած դէմքով, տեղիցը վեր կացաւ այնպիսի վճռողական ուժեղ ու գիտցիկ շարժվածքով, որ մենք ամենքս ակամա նրան հետեւեցինք։ Ես ոչինչ չը հասկացայ, միայն զգացի որ Բուրուները նրա երեսին նեսեց այնպիսի մի արատաւորող վիրաւորանք որ Վիկտօրիան ամբողջովին սարսըռալով այդ վիրաւորանքից կատաղութեան եւ հպարտութեան դեւերը ամբողջովին տիրապետեցին անսանձ օրէն։

Նա աչքերը բարձրացրեց Բուրուների վրա, ու ես երբէք այդպիսի ծանր, ինքնավստահ, ու հանգիստ վիրաւորող նայուածք չէի տեսել։

—Շարունակեցէք, Բուրուն, ասեց նա շատ պարզ եւ մեղմ կերպով. բայց նրա ձայնից մարմինս փչաքազվեց եւ սիրտս կծկվեց ցաւից։

Բուրուները յանկարծ չարեց, չափազանց կարմրեց, չփոթվեց, շտապեց եւ վարանման մէջ ընկաւ։

Վիկտօրիան շարունակում էր նայել նոյն ծանր արհամարանքով։

—Ալէքսանդր Վալէնտինիչ, աչքերը իմ կողմը դարձնելով եւ հպարտ կոչի եղանակով խօսքը ինձ ուղղելով, ներեցէք ինձ այս ողբերգաւեչտի համար որ կատարվում է ձեր ներկայութեանը։ Նա շատ ձանձրալի եւ յիմար է, բայց ես պարտք եմ ըզգում բացատրել, գոնէ այն պատճառով, որպէսզի դուք չը կարծէք թէ յիմարանոցում էք գտնվում։ Մանաւանդ որ պարոն Բուրուները խօսքը բացեց ինձ ձեր առջեւ անպատեւելու նպատակով։

Բուրուները տեղն ու տեղը մնաց եւ լռեց. Արինան աչքերով ուտում էր նրան. Վիկտօրիան չունչ առաւ եւ դանդաղօրէն, հեռզհեռէ որոշ ու խաղաղ կերպով շարունակեց.—Խընդիրը նրանումն է որ այդ աղջիկը, Ֆէնիչկան որի մասին հարցնում է Բուրուները, իմ աղջիկս է։ Իսկ նրա հայրը, ահա այս մարդը, ու ուժեղ եւ գեղեցիկ ձեռքը պարզելով սեղանի վրայով, ցոյց տուեց Աֆանասիչը...

Աֆանասիչի ոտքերը թուլացան եւ նա ընկաւ աթոռի վրա. նրա վայրենացած եւ ճմրթված դէմքում արքունի հետք չը մնաց եւ միայն քիթը վախից եւ յուզումից աւելի շատ կարմրեց։

Է.

Ի հարկէ աշխարհիս մէջ ամենազարմացած մարդն այն յոյնն է. որ հռչակաւոր ողբերգու Էսքիլէսի հետ դրուցած միջոցին ամպերի տակից թռչող արծիւի մագիլներից կրնան ընկաւ եւ ծակեց Էսքիլէսի գանկը։ Եթէ ես Վիկտօրիայի այդ անսպասելի քայլի առջեւ հեռի չէի Էսքիլէսի դժբախտութեան վկայ յոյնի զգացումներից ու տրամադրութիւնից, ու հաւանական է որ նոյն դէմքի արտայայտութիւնը ունէի, Բուրուն էլ ետ չէր մնում գանկը ծակված Էսքիլէսից։

Իմ առաջին տպաւորութիւնս էր որ Վիկտօրիան ծաղրում է Բուրուներին և այդ ծաղրի չափը անցնելով ստում է իր մասին կոչտ ու չար ոգեւորութեամբ որ միայն իրենց երկուսին

Գ.

Վերջացող դարու գիտութիւնը ծաղրեց հրաշքները և մարգարէութիւնները. բայց նորեկ դարն ալ ալ կընդունի եղեր զանոնք գիտական նոր օրինօք, ձեզ համար թերեւս շատ շահեկան լինի այս բանը, զի մեզ մնացած է միայն հրաշքներու եւ մարգարէութիւններու սպասել.

Ժան Ժագ Ռուսսօ, 1750 թուականներին հրատարակուող «Ընկերական դաշն» բրոշիւրի մը մէջ հետագայ մարգարէութիւնը հրատարակած է. որն որ անշուշտ իւր ժամանակին շատ հեգնողներն ունեցած լինելու է ու մինչեւ այսօր մեր պապերուն իր արձագանքը տուած չէ, նման մեծն Պետրոսի ենթադրեալ եւ աշխարհակուլ կտակին. Ինչպէս կերեւի պատճառը (ըստ հնոց) շահեկանութենէ զուրկեղած լինելն է. բայց այսօր մեզ իբր դժբախտ իրականութիւն մը կամ շահեկանութիւն մը ունենալու կոյնին տակ կը ներկայանայ. իցի՜ թէ քիչ ժամանակէն պարզուէր բարեբախտ իրականութիւնը.

Ահաւասիկ շուրջ 160 տարի առաջ եղած իրականութիւնը.

«Մեծն Պետրոս իրաւամբ հանճար մը չէր. ով որ այնպէս կարծած է սխալած է. իւր գործերէն մի քանին լաւ են, իսկ մեծ մասը անտեղի բաներ են.

«Ցեսաւ թէ իւր ժողովուրդը բարբարոս է, բայց բնաւ չը տեսաւ թէ կառավարելու տըհաս է.

«Կամեցաւ քաղաքակրթել զայն, մինչ պարտ էր քաղաքակրթութեան ընտելացընել. Կամեցաւ նախապէս Գերմաններ և Անգլիացիներ շինել, մինչ պարտ էր ըսկըսիլ Ռուսներ շինել.

«Արգիլած է իր հպատակներուն լինել այն ինչ որ կարող էին լինել, հմտացած է անոնց եղած լինել այն ինչ որ չեն, նման այն ֆրանսացի ուսուցչին որ կը պատրաստէ աշակերտը մի միայն պատանեկութեան մէջ վայրկեան մը փայլելու համար, ապա բնաւ բան մը չը լինել.

«Ռուս կառավարութիւնը պիտի ձգտի Եւրոպան տիրապետելու, բայց ինքը իրմէ պիտի տիրապետուի. Թաթարները և իւր դրացիները իւր և մեր տէրերը պիտի պիտի լինին, և այս յեղափոխութիւնը ինձ անվրիպելի կը թուի, զի բոլոր Եւրոպայի թագաւորներն այդ օրը փութացնել կաշխատին միանուագ».

Մենք հայերս մինչ այսօր կրօնական ազգ նկատուած ենք. որով այս տողերը կարդալէ վերջն ալ դարձեալ կրնանք մեղեդել.

Ամեն, եղիցի եւ եղիցի...

Դ.

Մեր խորին հիացումը յայտնելով հանդերձ հողացեալ մեծ գիտունին յիշատակին, փափագելի էր որ Մեծն Պետրոսի ենթադրեալ աշխարհակուլ կամ ձգկընկուլ կտակին չափ ալ սա մարգուն մարգարէութիւնը չըբլաբերութեան ելած լինէր, որ մեծ Պետիկին պզտիկ թոռնիկները այդչափ չամբարտաւանային, այլ ջանային գէթ գործադրել իրենց պապենի կտակն.

Ինչ որ է «կամք Տեառն օրհնեալ եղիցի». Եւ ինչ որ եղել է դա անպայման լաւն է.

Թէեւ վերջերս, ռուս.-ճաբոն պատերազմին առթիւ մի քանի գիտուններ փեշերնին վեր ժողված շտապեցին «Դեղին ցեղին» «վտանգը մատնանշելո», որմէ մենք հայերս բնաւ չերկնչեցանք դիւցազնաբար!!! զի բան մըն է այդ, որ իսպառ սպուռ զուրկ է կարեւորութենէ գէթ մեզ համար, որովհետեւ երկար դարերէ յետէ անդադար մեր գլխուն վրայ տեղացած բոլոր ճախողուածներն ու դժբաղդութիւններն կատարուած են ճերմակ ցեղի բարի ու քրիստոնեայ ճերմակ թագաւորներու ձեռամբ, այնպէս որ այսօր չկայ հայ մը որուն սիրտն ու բերանը լեցուած չլինի արդար բարկութեան և ցասմանալիր վրէժխնդրութեան փրփուրով, ուստի անխուով սրտով կըբնանք ըսել ազգովին,

«Թող քիչ մըն ալ շատ մըն ալ անոնք ճաշակեն դառնութիւն».

Ա՛ՐԴ.

Ո՛վ «Պօտամա», շնորհէ քու քաջերուդ այն ուժն ու կորովը որ վաղօրօք ի գլուխ հանեն այդ մեծ ու փառաւոր գործը՝ Դեղին ցեղի տիրապետութիւնը կամ յաղթանակը, առ ի սփոփանս դարաւոր և տանջեալ ազգերու.

Դուն ալ ո՛վ «Նիրվանա», ընդունիր մեր այս խոնարհ աղերսը ու պարփակէ քու յաւիտենական ծոցիդ մէջ բոլոր այժմեան վայրիւշներն որ երկրիս երեսէն դէպի վեր առ քեզ անհնութեանդ կը բարձրանան, և թոյլ տուր վերընձիւղել ու փթթել այժմեան զօսացեալ և երբեմնի երանաւէտ դրախտն. հոսեցնելով անոր ծոցէն «Փիսոնն» ու Գեհոնն» գոչ գոչանօք.

ՖԱՀՐԱՏ

1 մայիս 1905
Արծն

ՃԱԲՈՆ ԵՒ ՄԻԻՍ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերջերս Թայմզի Թոքիոյի սեպհական թղթակիցը ղրկած էր շատ հետաքրքրական լուր մը, որ սկսած է ծաւալ գտնել շարք մը տեղեր՝ Ճաբոնի միւս տէրութիւններու բռնելիք դիրքին նկատմամբ. Զրոյցը կը դառնայ սա կէտին շուրջը թէ՝ երբ պատերազմը իր վախճանին հասնի, Ճաբոնի գլխաւոր գործը պիտի ըլլայ անմիջական ուրախարերութիւն հաստատել Ռուսաստանի հետ, ու այդ հիմնուելով հետեւեալ դրութեան վրայ. — Ճաբոնիա, ըլլալով կործանական եւ բանիբուն տէրութիւն մը անտարակոյս չպիտի անտեսէ այն շահը որ կը խոստանայ իրեն այս դաշինքը, առնելով ամբողջ Հեռաւոր Արեւելքի քօնդրօլը իրենց ձեռքին տակ եւ փակելով դռները Արեւմտեան միւս երկիրներուն հանդէպ.

Մենք մեր կողմէն բան մը չիպիտի ըսենք այդ մասին, այլ. որպէս հետաքրքրական կտոր մը, յատուկ պիտի բերենք Թայմզի կարծիքը այդ ծիծաղելի եւ աղաղակիչ անճարակութեամբ մը հիւսուած անկքսութի մասին.

Հետաքրքրական է այսպիսի տեսութիւններու ծագումը գտնել. Մենք կենթադրենք որ այդ ալ ծնունդ առած է այդ միւնոյն աղբիւրէն՝ Ուրկէ էր Դեղին վտանգը. Դա հիմնուած է այն մտքին վրայ, որ Ճաբոն ըլլալով Արեւելեան աէրութիւն մը, իսկ Ռուսաստան կիսա-Արեւելեան՝ այս երկու պետութիւնների ջերմ մտերմութիւն մը պէտք է ունենան՝ Արեւմտեան ազդեցութիւնը հեռու պահելու համար. Այս սահմանուած է ըլլալ բառերու եւ զրոյցներու խարդախութիւն մը. որ կը կուրացնէ ժողովուրդը իրողութիւններուն հանդէպ. Միւս կողմէ, կայ սա տըխմար մտածումը, որ պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր գոյութիւն ունի, թէ Ճաբոնիան, չըլլալով քրիստոնեայ ազգութիւն մը, չկրնար ունենալ՝ ինչ որ ռուս գրող մը հպարտօրէն կը հոչակէ՝ «արդարութեան և բարոյականութեան շարք մը հիմնական սկզբունքներ» որով Արեւմուտքը կը պարծի. եթէ քրիստոնէութիւնը իր գտնողին վարդապետութեան հետ կապակցութիւն ունի, Ճարոնացիք մեզմէ աւելի լաւ քրիստոնեաները ըլլալու պահանջը կըրնան ունենալ. Ճարոնիա, անշուշտ ռուսական քաղաքականութիւնը կառավարող սկզբունքներուն նմանութիւնն ալ չունի. Ան բոլորովին տարբեր սկզբունքներ ունի, եւ մեր Թոքիոյի թղթակիցը կը հաւատայ որ

հասկանալի է: Բայց Արինային նայելով ես նրա դէմքում նկատեցի միայն բարկութիւն, բայց ոչ զարմանք.

— Ինչը խելքին փչեց դուրս տա՞լ, յայտնում էր Արինայի կատաղած դիմագիծը.

Աֆանասեւիչի սպանված կերպարանքն էլ շատ պերճախօս էր.

Վերջապէս Բուրունն ինքն էլ չանթարված էր երեւում ոչ այնքան իբր չափազանց վիրաւորիչ նորութիւն լսող մարդ, այլ որպէս դեռ յուսացող, լսածը սուտ համարող, ու անձնական հարցուփորձի մէջ այդ բոլոր յոյսը օդն է ցնդում եւ ամենավատ ենթադրութիւնները իրականութեան են վերածվում.

Ոչ մի խօսք չարտասանվեց, աչքերը մթագնեցին, նա ուզեց յառաջանալ դէպի Վիկտորիան, ուզեց խօսիլ. բայց Վիկտորիայի ցուրտ ու թշնամական նայուածքը զսպանակի նման նրան ետ մղեցին. Բուրունը ետ դարձաւ արձակեց մի խոխոջ եւ արագ բայց ոչ հաստատուն քայլերով վազեց դէպի տուն.

Վիկտորիա Պավլօվնան կամացուկ նստեց աթոռի վրայ.

— Հեռացէք այստեղից, մոայլօրէն ասեց նա Արինային եւ Աֆանասիչին, առանց նրանց վրայ նայելու. այժմ ձեզ հետ գլուխ չունեմ.

Երբ մենք մնացինք առանձին Վիկտորիան երկար լուռ նստեց տխրած գլուխը ձեռքին յենած. նրա դէմքով սահում էին կատաղած զզուանք յայտնող ցնցումներ.

— Ես Պարտաւոր եմ ձեզ պատմել թէ գործը ինչումն է՝ վերջապէս չոր եւ պաշտօնական եղանակով ասեց նա. Ես վախենում եմ որ այս բոպէիս արդէն ձեր հոգում շատ քիչ յարգանք մնաց դէպի ինձ. Շատ կարելի է որ եթէ դուք լսէք իմ խոստովանութիւնները, բոլորովին դադրէք ինձ յարգելուց, երես կը դարձնէք զզուանքով, պէտք է ցաւէք որ այսպէս տհաճելի ծանօթութիւն ունեցաք եւ հիւր մնացիք ինձ մօտ. Մինչդեռ չէ կարելի յանցաւորին դատապարտել առանց հարցաքննութեան, եթէ նոյն իսկ յանցաւորը ինքը խոստովանում է. Եւ ինձ համար ցանկալի չէ զրկվել ձեր բարի կարծիքից, իմ մասին առանց փորձելու պաշտպանվել կարեցածիս չափ. Կարելի է որ դուք գտնէք թէ ամբողջ մեղաւորութեամբս հանդերձ ներողամտութեան արժանի եմ.

Ես ուզեցի Վիկտորիային ընդմիջել յայտարարելով.

— Իմ ինչ գործս է, ինչ իրաւունք ունիմ ես թափանցելու ձեր ներքին կեանքի մէջ... ձեզ դատելու ոչ ցանկութիւն եւ ոչ կարելիութիւն ունիմ. Բայց Վիկտորիան ինձ ընդմիջեց դեռ առաջին խօսքիս վրայ շարունակելով.

— Դիպուածը ձեր առջեւ բացեց. կիանքիս մի կողմը, որի մասին օտարներից ոչ ոք գիտէր. Ես գիտեմ որ այդ աստուծը կեղեցիկ չէ. Դուք չէք կարող դատապարտել ինձ. գոնէ թոյլ տուէք ապաշխարելու.

Վիկտորիայի ձայնը դողում էր անկեղծ յուզմունքից.

— Գիտէք քանի՞ տարիներ այս որթը իմ մէջ մտած կրծում էր ինձ մինակութեան մէջ. Այժմ գլուխը դուրս հանեց, արեւի տակ դուրս եկաւ. Ինչ տեսակ կը գտնէք. ինչ կասէր այդ մասին այդ ձեր գործն է.

(Շարունակելի)



դաշինքն ալ ալ Միւնոյն սկզբունքներուն վրայ պիտի շարունակէ գործադրել։ Այսօրուան Ռուսաստանին հետ դաշնակցելու համար՝ ան պէտք է թողու այն բոլոր ուղղութիւնները որոնց հետեւած էր մինչեւ օրս։ Ան որ երբէք նախայարձակ եղած չէ, պէտք է միանայ տէրութեան մը՝ շարունակ եւ անսանձօրէն նախայարձակ։ Ան որ իր երկրին խաղաղ յառաջդիմութիւնով փայլած է, պէտք է քալէ այնպիսի մէկու մը ճամբուն մէջ, ուր կուլ տալով ուրիշ ժողովուրդներ՝ Միւնոյն ատեն իր բնակչութիւնը պահած է աղքատութեան և թշուառութեան մէջ։ Պէտք է չլսէ Զինաստանը՝ փոխանակ զայն պահպանելու, որդեգրէ վտարման անմիտ քաղաքականութիւնը՝ փոխանակ ազատ հազորդակցութեան, եւ վերջապէս ընդունի ազգային եւ անհատական բարոյական օրինաձեւ մը՝ բացարձակապէս հակառակ իր ժողովրդին փարած ուղղութեան։ Երբ այդ բոլորը ընէ, ուրիշ ի՞նչ ունի ակնկալելու՝ բացի այն թէ որ զինքը այդքան ստորնացուցեր է, կրնայ ո՞ւ է յարմար պարագային մատնել զինքը։

Եւ ոչ մէկը որ կը ջանայ նայիլ ճաբոնացոց վրայ ինչպէս իրենք ցոյց տուին ինքզինքին, փոխանակ զանոնք արհամարհելու՝ հիմնուելով բերանացի տխմար զրոյցներու վրայ, պիտի վրդովուի այն ակնկալութիւններով, զորս մեր Թղթակիցը այնքան ուժգնօրէն կը ժխտէ։ Եթէ երբէք ըլլար ո՞ւ է վտանգ, որ ճաբոնացի քաղաքագէտները գործէին այսպիսի սխալ մը՝ ջանալով իրենց կենցաղավարութեան եւ ուղղութեան տրամագծօրէն հակասող խառնուրդ մը յառաջ բերել, կրկին այդ վտանգը կարելի է հեռացնել, ինչպէս կը բացատրէ ինք, այն զգուանքի զգացումով, որ ճաբոնացի ժողովրդին մէջ արթնցած է սոյն պատերազմին մէջ իր հակառակորդին վարմունքէն։ Թէ Ռուսաստանը ուժեղ է՝ երբէք չեն տարակուսիր եւ տարակուսած ալ չեն երբէք, սակայն, ուժեղ թէ ոչ, ճաբոնական զգացումը ընդվզեցուցան իր ձեռք առած ազգային ընթացքով եւ բազմաթիւ անհատական քաղաքացիներու վարմունքին չնորհիւ։ Ճաբոն բաւականաչափ խելացի պիտի գտնուի բարեկամութիւն փնտռել այնպիսիներու հետ, որոնք աւելի իրեն նմանութիւն ունին եւ որոնց ուղղութիւնը, հաւաքական եւ անհատական շատ սերտ կապով կը մերձենայ իր իտէալներուն։ Միւնոյն ժամանակ իր կռիւը կը շարունակէ ան, հանդարտ ու անցուցամոլ, բայց եւ մահացուցիչ ոյժով եւ անխախտ կամեցողութեամբ։ Ուրիշ նմակով մը Միւնոյն Թղթակիցը կը յուզէ այն զարմացուցիչ դիւրութիւնը, որով Ճաբոնիա մը կը կրէ իր ֆինանսական կռիւը։ Նոյն իր ֆինանսիստներն անգամ զարմացած են եւ չեն գիտեր թէ ո՞ւրկէ կուգայ այն դրամը, որ անուրանալիօրէն միշտ տեղն է։

Անտարակոյս շատ բան կայ այն բացատրութեան մէջ՝ թէ՝ զարգանալու վրայ է ան, կամ կը գտնէ ծովէն այն բոլորը ինչ որ հարկաւոր է իր ժողովրդին պահեստին համար, նոյն իսկ մաս մը՝ն ալ արտածելով այս նոր հարստութենէն, որ բնութիւնը տարուէ տարի կը շնորհէ փոխարէն համեմատաբար աշխատանքին»։

Մ. ՅՈԼԱԿ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Թէհրան 9 Ապրիլ

Երկու շաբաթ սրանից առաջ տեղւոյս եկեղեցում կատարուեցաւ հոգեհանգիստ ի յիշատակ Բագուի անգթութիւնների զոհերի։ Հոգեսանգստի ժամանակ խօսեց տեղւոյս քահանան արթնութիւն և զգաստութիւն պատուիրելով ժողովրդին գալիք նրման երեւոյթների հանդէպ։ Ապա խօսեց մի պարոն, որը իւր քաղաքական տեսութիւններով հիասթափեցրեց ժիղովրդին, որի պատճառով և յայտորդ կիւրակին տեղի չունեցաւ նորոգ հանգուցեալ Քրիստափոր Միքայէլեանի հոգեհանգիստը։

Անցեալ կիրակի միայն կարելի եղաւ յիշեալ այդ հոգեհանգիստը կատարել տալ։ Հանգուցեալի դիասեղանի վրայ դրուած էին 7 պսակներ, 5ը իւր գաղափարակիցներից, 1ը Դանանց Բարեգործական ընկերութիւնից եւ 1ն էլ Հ. Կ. կողմից։

ԾԵՐՈՒԿ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սոֆիայի նախկին քաղաքապետ Բասմաճիէվ որ նահանգական դատարանի կողմէն դատապարտուած էր իբրեւ իր պաշտօնին մէջ թերացող հռչակաւոր Խալիւն ձերբակալելու խնդրին մէջ, բարձրագոյն դատարանէն լրիւ-լրիվին անմեղ ճանչցուած է։

— Սոֆիայի համալսարանին դասընթացքը սկսելէն յետոյ, քանի մը օր առաջ կրկին դադրեր է, որովհետեւ ըմբոստացողները խանգարած են դասախօսներուն։

Ուսանողութիւնը այժմ երկու մասի բաժնուած է։

— Հրոսապետ գնդապետ Եանքով այս օրեր կուզէր կրկին Մակեդոնիա անցնիլ, սակայն պուլկար կառավարութիւնը արգելք հանդիսացեր է։

— Բժշկական գլխաւոր վարչութիւնը Վենեբական ախտերու տարածման դէմ նոր օրէնք մը մշակեր է ազգային ժողովին ներկայացնելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Թուրք կառավարութիւնը շրջաբերականով մը իր Մակեդոնիոյ պաշտօնեաներուն հրամայած է քրիստոնեայ ցեղերու մարդահամարը ընել և դաւանանքներու տարբերութիւններու՞ վրայ հիմնուելով։

Պալքանեան պետութիւնները շատ դժգոհ են այդ ձեւի ժողովրդահամարէ մը։ որովհետեւ պատրիարքարանի վերաբերող պուլկարները, սերպերը և ուլախները իբրեւ յոյն պիտի նշանակուին։ Ցեղերու այդ խառնումը մեծ իրարանցումներ առաջ պիտի բերէ, ատոր համար ալ դեսպանները բողոքագիր մը կը պատրաստեն։

— Ալպանական հրոսախումբ մը բաղկացած 200 հոգիէ կը պատրաստուի Սերպիա խուժել։ Կը վախցուի որ ալպանացիները թուրքիոյ սերպերը ջարդեն։

— Բարիզեան «Մաբէլ» թերթը մայիս 1ին կը հաղորդէ որ Պոլսոյ գաղտնի ոստիկանութեան պետը ձերբակալուած է, Սուլթանը կասկածեր է որ ան յարաբերութեանց մէջ է գահաժառանգին հետ։

ՌՈՒՍԻԱ

Բագուի քաղաքագլուխ Ալէքսանտր Նովիկով ռուս պարոնը դատի ենթարկուած է իր մէկ նամակին պատճառով որուն մէջ նահանգապետը Բագուի կոտորածներուն յանցաւորը կը ներկայացնէ։

Այդ նամակին հայերէն թարգմանութիւնը և Ռուսերէն բնագիրը հրատարակեցինք «Շարժումի» անցեալ թիւով։

— Այս ամիս Մոսկուայի մէջ տեղի պիտի ունենայ Ռուս կիներու միթինկ մը, որուն նախաձեռնարկիչը եղած է Մոսկուայի կանանց ընկերութիւնը։ ու վերջը միացեր են Քիէվի, Բեթերսպուրկի, Խարքովի և այլ քաղաքներու կիները։

Այդ միթինկին մասնակցելու են հարիւրաւոր նոյնիսկ հազարաւոր կիներ։

Միթինկը տեղի պիտի ունենայ հարուստ տիկնոջ մը սրահին մէջ։ մասամբ, որովհետեւ այդ սրահը 400 մարդ կրնայ առնել միայն։

— Շուշիի մէջ երկու ռուս պաշտօնեաներու դիակները գըտնուեր են ջախջախուած։

— 30 ապրիլ Թիֆլիսէն կ՚հեռագրեն որ երկաթուղային վարչութեան բարձր պաշտօնեաներէն մին Սոֆրոնոֆ՝ վիրաւորուեցաւ ատրճանակի հարուածէ։ Ցարձակումի գործողը անյայտացաւ ամբոխին մէջ։

ՌՈՒՄ—ՃԱԲՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Մայիս 2ին Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ ճաբոնացիները կը շարունակեն իրենց ուժերը համախմբել։ մանաւանդ ռուսական աջ թեւին դիմաց։ այնու ամենայնիւ կատարեալ լռութիւն կը տիրէ։

—Մանիլայէն մայիս 1ին կը հաղորդեն որ հոն յանկարծ երեւցեր է ամերիկեան զօրաւոր նաւաբաժին մը, որ թէ Ծ. արեւելքի և Միացեալ Նահանգներու մէջ մեծ զարմանք առաջ բերեր է։

Նաւաբաժինին պաշտօնական նպատակն է որ չեզոքութեան վրայ լաւ հսկէ։ սակայն իրողութիւնը այն է որ եթէ Ճաբոնիան յաղթող հանդիսանայ, ան վերջ նապէս պիտի մնայ Ծ. արեւելքի մէջ։

—Բուրօբաթքին «Նովօէ Վրէմիա» թերթի թղթակցին յայտարարած է։— յաղթութիւնը մեզ պէտք է և կարելի է։ իսկ գալով հաշտութեան այն շատ արտաւորիչ պիտի ըլլայ։ ուստի և Ռուսիա զայն ընդունիլ չի կրնար։

— Բիկատորեան կղզիներու քով Ճաբոնացիները ունին 85ի չափ պատերազմական նաւեր։

— Մայիս 1ին Թոքիոյէն կը հեռագրեն որ Ֆրանսական երբեմնի ծովային կցորդ Պուրկօանի ձերբակալումը մեծ յուզում յառաջ բերեր է տեղական Ֆրանսական գաղթականութեան մէջ, եւ ֆրանսական դեսպանատունը այդ խնդիրը ձեռք առած է։

— Ռուս նաւատորմիղի Ֆրանսական ջուրերէն հեռանալէն յետոյ, Թոքիոյի վաճառականական խորհուրդը Ֆրանսացիներու հետ առեւտուր չընելու որոշումը ջնջեր է։

ԱԶԴ

Ազգատ. Ընկեր. Գործ. Ժողովս կուգայ հրապարակաւ յայտարարել թէ Ընկերութեանս ի նպաստ սկսած է գանձանակ մը շրջաբերել հաւաքիչ պ. Հ. Փիրիշեանի ձեռամբ. եւ կը խնդրէ որ ամէն անհատ անխարօրէն մասնակցի սոյն բարենպատակ գործին որուն համար կանխաւ մեր շնորհակալիքը։

Այս առթիւ նաեւ կուգայ խնդրել այն արգոյ ազգայիններէն, որոնք ինքնաբերաբար փափաքած են ընկերութեանս ամսական վճարում մը ընել, հաճին ըստ առաջնոյն վճարել հաւաքչին, ստանալով իրենց ընկալագրերը, որպէս զի Գործ. Ժողովս կարենայ միշտ նպաստել իրեն դիմող աղքատները։

Ի դիմաց Ազգատ. Ընկեր.

Ատենադպիր Ատենապետ

Ց. Ազապլար Մ. Գարագաշեան

Շումլայի «Պետս-Պուլկարացի» ընթերցարանին մէջ կը ծախուի Հայ Ցեղ. Դաշնակցութեան բարձրաքանդակ ոսկեզօծ զինանշանը գանէ խիստ քեղշ պատրաստուած 49—43 սն. մեծութեամբ, Արձանագործ Պ. Խորէն Փափազեանէ, որ գեղարուեստական գնահատելի գործ մրն է։

Կարժէ որ ամէն հայ ուդաշնակցական ընկեր ունենայ ան իր սենեակին մէջ։

Դինն է 10 ֆրանք կանխիկ, դիմել Շումլայի „Պետս-Պուլկարացի“ ընթերցարանի վարչութեան։

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна